

բաց արարեք. եւ զՏէր Աստուած սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցեք. եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռաբուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա եւ ուխտի նորա, եւ ի վերայ բնակ տէրանց աշխարհիս Արշակունոյ:

12 Եւ յետ այսորիկ գրեաց հրովարտակ առ թագաւորն Յունաց, եւ նմա յանձն արար զաշխարհ Յայոց եւ զԱրշակ արքայ: 13 Եւ յետ այսորիկ իբրեւ միահամուռ ժողովեալ կային շուրջ զնովաւ, եւ իբրեւ կայր հիւանդ ի մահիճս իւր, անդ թագաւորն Արշակ եւ անդ Վարդանդուխտ կին թագաւորին, եւ անդ ամենայն աւագք եւ մեծամեծք եւ նախարարք Յայոց այր եւ կին առ հասարակ ամենայն երեւելի մարդիկ, ապա երաց Մանուէլ զամենայն զանդամս իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ եւ եցոյց զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի. զի աւելի քան զիսուն¹ սպի կայր վիրաց եւ յառնի յանդամսն, զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր: 14 Սկսաւ լալ, եւ ասել՝ թէ ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմուս, եւ մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի. եւ ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զաւրէն անասնոյ մեռելոյ եղէ: 15 Չի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի՛ զեկեղեցիս եւ մի՛ զուխտ Աստուծոյ առ ոտն կոխիցեն: 16 Սակայն եւ ի վերայ Արշակունեաց բնիկ տէրանց աշխարհիս, եւ ի վերայ կանանց եւ ի վերայ որդւոց մերոց, եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս եւ ի վերայ եղբայրութեան ընկերութեան եւ մտերիմ բարեկամութեանն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թեպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս եհաս ինձ մեռանել:

17 Չայս եւ բազում եւ աւելի քան զսոյսս խաւսեցաւ առաջի Արշակայ արքայի եւ առաջի ամենեցուն. եւ աղաչեաց եւս զթագաւորն Արշակ, եւ ասէ. Իմ Աստուծով կեցեալ է² ջերմ քրիստոնէութեամբ, մի յանկարգ իբրեւ հեթանոսս կոծ կամ աշխարանս ոք անյուսութեամբ դնիցէ ինձ: 18 Չի որ միանգամ յուսոյ յարութեան ակն ունին, միւսանգամ կենդանութեան եւ գալստեանն Քրիստոսի, չէ պարտ լալ զնոսա: 19 Այլ իմ ցայժմ յուսով երկիւղիւ կեցեալ, բայց դուք մի՛ թիրիցիք ի պատուիրանացն Աստուծոյ. աւելի զարդարութենէ փոյթ արասցիք, եւս առաւել զողորմութենէ: 20 Չի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուիրէր. եւ ինքն յամենայն ժամ ի կենդանութեանն զսոյն գործէր, եւ այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց, տնանգաց, գերեաց, ամայեաց, աւտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր Նա. Քան զողորմութիւն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ եւ

1 Օրինակ մի՛ քան զտասն

2 Տպ. եւ